Արձանագրություն N 2
«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22-23/140» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման **և գնահատման նիստի**

ք. Երևան 30 դեկտեմբեր 2022թ.
Ժամը՝ 11:45

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Վարդապետյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Փինաջյան
Ս.Զոբանյան

Քարտուղար՝ Դ. Միերյան

1. **«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22-23/140»** ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2022թ. դեկտեմբերի 30-ին, ժամը 11:45-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ ստացվել է հարցում, որին տրվել է համապատասխան պարզաբանում:

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է հունվարի 03-ին, ժամը 11:45-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուց հետո՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեով, 809 աշխատասենյակում:

«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22-23/140» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան 03 հունվար 2023թ.
Ժամը՝ 17:00

6. **«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22-23/140»** ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2023թ. Հունվարի 03-ին, ժամը 11:45:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	**Մասնակցի անվանումը**	**Տվյալները**
1	Ալտերնատիվ գրուպ ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի պող 54ա, հեռ. +374 93 858-733
2	ԼԵՈ Ա ՍՊԸ	Հասցե նշված չէ հեռ. +374 98815665
3	ԷՅՋԻՋԻ ՍՊԸ	ք. Երևան, Արշակունյաց պ./Շ/39/9/90, հեռ. +374 41 990936

4	Ֆեռե ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Սարի Թաղ 5 շարք, տուն 5, հեռ. +37499500304,
5	«Լիոն ՍՍ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ռոստովյան փ. 15շ., 10բն., հեռ. +37496 744-744
6	Սոնա Մատինյան Արթուրի ԱՁ	ք. Երևան, Սեբաստիա Փ. / 137, հեռ. +37499533311

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	քանակը	Գնման առարկայի նախահաշվային գինը	*Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)**											
					Ալտերնատիվ գրուպ ՍՊԸ		ԼԵՈ Ա ՍՊԸ		ԷՅՋԻՋԻ ՍՊԸ		Ֆեռե ՍՊԸ		«Լիոն ՍՍ» ՍՊԸ		Սոնա Մատինյան Արթուրի ԱՁ	
					Գնի առաջարկը		Գնի առաջարկը		Գնի առաջարկը		Գնի առաջարկը		Գնի առաջարկը		Գնի առաջարկը	
					առանց ԱԱՀ	ներառյալԱ ԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալԱ ԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալԱ ԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալԱ ԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալԱԱՀ
1	շենքերի մաքրման ծառայություններ	դրամ	1	17000000	5000000	-	6500000	7800000	12858333	15429999.60	16950000	-	16995000	-	16999909	-

- **Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն <<առանց ԱԱՀ>> սյունակը**

9. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում Ալտերնատիվ գրուպ ՍՊԸ-ն :

10. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ուղարկված հայտը համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերը կազմված չեն հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարությունը և իրական շահառուների մասին հայտարարագիրը ստորագրված չեն հրավերով սահմանված կարգով, ինչով պայմանավորված հանձնաժողովը որոշեց՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել շտկել նշված անհամապատասխանությունները:

11. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 05.01.2023թ. ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեով, 809 աշխատասենյակում:

«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22-23/140» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան 05 հունվար 2023թ.

ժամը՝ 17:00

12. Հանձնաժողովը արձանագրեց, որ սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել նշված անհամապատասխանությունները: Նշվածով պայմանավորված հանձնաժողովը որոշեց հայտը գնահատել անբավարար և մերժել, իսկ գնման ընթացակարգը Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարել չկայացած:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Վարդապետյան

Անդամներ՝ Ա.Փինաջյան

Ս.Չոբանյան

Քարտուղար՝

Դ.Միհրյան